Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Լ. ՍԱՖԱՐՅԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

5–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մեթոդական ուղեցույց

ԵՐԵՎԱՆ 2023

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ՀՏԴ 000
ԳՄԴ 000
Գ 000

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ: 5–րդ դասարան: Մեթոդական
Գ 000 ուղեցույց / Կ. Հովհաննիսյան, Լ. Սաֆարյան.— Եր.:
«Զանգակ» հրատ., 2023.— 56 էջ:

ՀՏԴ 000
ԳՄԴ 000

ISBN 978–9939–99–000–0

© Հեղինակներ, 2023
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2023

Հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանի դասգիրքը կազմելիս հեղինակները առաջնորդվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից ստեղծված «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառի պետական չափորոշչով և գերմաներենի առարկայական ծրագրով:

Ներկայումս, ավելի քան երբևէ, կարևորվում է օտար լեզվի իմացությունը: Այն հասարակության համար ապահովում է արագ ինտեգրում համաշխարհային հանրության քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթական ոլորտներին: Լինելով հաղորդակցության միջոց, օտար լեզուն հնարավորություն է ընձեռում տեղեկատվություն և գիտելիքներ ձեռք բերելու ամենատարբեր բնագավառներից: Այն նպաստում է անհատի ձևավորմանը և գոյություն ունեցող տեղեկատվական աղբյուրներից օգտվելու անսպառ հնարավորություններ է ստեղծում:

Օտար լեզվի ուսուցումն ունի հաղորդակցական ուղղվածություն, որը դրսևորվում է ինչպես խոսքի, բառապաշարային, քերականական և հնչյունաբանական կողմերի ուսուցման ընթացքում, այնպես էլ խոսքային գործունեության բոլոր ոլորտներում, այն է՝ ունկնդրել, խոսել, կարդալ և գրել:

Գերմաներենի 5–րդ դասարանի դասագիրքը ներկայացնում է գերմաներենի լեզվական և խոսքային կարևորագույն կառույցները: Դասագրիրքը նպատակ ունի հնչյունական, ձևաբանական, շարահյուսական, բառային և բառակազմական վարժությունների, համապատասխան տեքստերի օգնությամբ աշակերտների համար հնարավորություն ստեղծել արագ և վստահ յուրացնելու գերմաներեն նոր գիտելիքները, ակտիվորեն օգտագործելու գերմաներենը գրավոր և բանավոր:

Չնայած միջին դպրոցում օտար լեզվին հատկացված սահմանափակ ժամաքանակին՝ հեղինակներն աշխատել են դասագիրքը հագեցնել մշակութային, երկրագիտական, կենցաղային և այլ բնույթի նյութեր պարունակող տեքստերով, ղրանով իսկ հնարավորություն ընձեռելով ուսուցիչներին՝ զարգացնելու աշակերտների բանավոր և գրավոր խոսքը:

Դասագրքերը կազմելիս հեղինակները նկատի են ունեցել, որ աշակերտը պետք է սովորի և կիրառի օտար լեզուն որպես հաղորդակցման և տեղեկատվություն ստանալու միջոց: Հաշվի է առնվում նաև այն հանգամանքը, որ առնչվելով օտար լեզուների հետ, նա ավելի լավ է ըմբռնում մայրենին:

Դասերի կառուցման հիմքում ընկած է միջառարկայական կապերի ապահովումը 5-դասարանում դասավանդվող ինչպես հասարակագիտական այնպես էլ բնագիտական առարկաների հետ՝ հաշվի առնելով բովանդակության և լեզվի ինտեգրված ուսուցման մեթոդաբանությունը (CLIL):

Ըստ առարկայական ծրագրի, 5–րդ դասարանին հատկացված է 6 թեմա: Դասերը խմբավորված են առանձին թեմաների մեջ: Թեմաներին համապատասխան նյութերի ընտրության ժամանակ հաշվի է առնվել աշակերտների մինչև այժմ ձեռք բերած գիտելիքները, նրանց տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրությունները, նրանց սոցիալական աշխարհը, թեմաների արդիականությունը և դաստիարակչական արժեքը: Դասերի մեջ ընդգրկված տեքստերը ըստ իրենց նպատակաուղղվածության ու առաջադրած բառային և քերականական նյութի հիմնականում ընթերցանական բնագրեր են, երկխոսություններ և իրադրություններ, որոնք զետեղված են դասագրքում աշակերտի բառապաշարի ընդլայնման համար:

Երկխոսությունների, բառային և քերականական համապատասխան վարժությունների մեջ կազմավորվում են խոսքային գործունեություն ծավալելու ունակությունները: Դրանց շնորհիվ աշակերտին հնարավորություն է

ընձեռնվում մասնակցելու երկխոսությունների: Ընտրված է հիմնականում ժամանակակից հետաքրքրաշարժ լեզվական նյութ և նյութի դժվարության մտածված աստիճանական ներմուծում, որը համապատասխանում է աշակերտի ըմբռնելու կարողությանն ու մտածելակերպին:

Բացի դրանից, դասագրքում ընդգրկված են մի շարք օժանդակ նյութեր, որոնք ծառայում են ուսումնական նոր նյութի ամրապնդմանը և ներմուծված քերականական կաղապարների յուրացմանն ու ճիշտ օգտագործմանը, ինչպես, օրինակ, բանաստեղծություններ, տնային ընթերցանության տեքստեր՝ բառերի մեջ օգտագործված նոր բառապաշարին և քերականական նյութին համապատասխան:

5–րդ դասարանի առանձնահատկություններից մեկն այն է, որ նոր նյութի ներմուծումը նախապատրաստվում և մատուցվում է՝ ստեղծելով ինտերակտիվ միջավայր: Ուսուցչի խոսքի օգնությամբ հաղորդվում են լեզվական նոր գիտելիքներ և տեղեկություններ:

Ուսուցման հիմնական նպատակն է խոսքային գործունեության տեսակների՝ խոսելու, լսելով հասկանալու, ընթերցանության զարգացումը:

Քերականական նյութի ճիշտ ներմուծումը, բառապաշարի հարստացումը, օտար լեզվով արտահայտվելու ունա-

կությունների զարգացումը և գրավոր տեղեկություններ հաղորդելու կարողությունները, այսինքն՝ աշակերտների լեզվական և խոսքային ունակությունների համակարգումը այդ նպատակին հասնելու միջոց են:

Դասագրքի կառուցվածքը

5-րդ դասարանի դասագիրքը կառուցված է 6 հիմնական միավորներից (Lektion):

Յուրաքանչյուր միավոր բաղկացած է մի քանի դասերից, և որպես «Bunte Ecke» մասին, որտեղ և կրկնվում է անցած նյութը, և հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները, տրվում են հումոր, հանելուկներ, շուտասելուկներ, երգեր և խաղեր, որոնց օգտագործումը դասը առավել հետաքրքիր և աշխույժ դարձնելուն:

Դասերն ավարտվում են ամփոփիչ առաջադրանքներով, որոնք կարելի է հանձնարարել տնային աշխատանք:

Դասագիրքն ունի քերականական հավելված, որը հակիրճ և մատչելի շարադրվում է քերականական նյութը, որից կարող է օգտվել թե ուսուցիչը քերականական նյութը

ներմուծելիս, թե աշակերտները ինքնուրույն աշխատանք կատարելիս։

Դասագիրքն ավարտվում է մանրամասն բառացանկով։ Աշակերտը դասագրքի առաջադրանքների շրջանակում կարիք չունի այլ բառարաններից օգտվելու։

Դասագրքում օգտագործված են սիմվոլներ տարբեր առաջադրանքների համար, այսպես՝ թարգմանությունների դիմաց դրված է գրիչ, նոր քերականական նյութը ներմուծվում է …, իսկ նոր բառերը՝ ….,

Խոսել (Sprechen)

Տվյալ հմտության հիմքում ընկած է խոսքային գործունեության կամ հաղորդակցական իրազեկության զարգացումը: Աշակերտները պետք է կարողանան հասկանալ առօրյա իրադրությունները և ակտիվ մասնակցել առօրյա թեմաների շուրջ երկխոսություններին: Ընդ որում, աշակերտները պետք է իրենց կարծիքն արտահայտեն պարզ ու հասկանալի և համապատասխան վերաբերմունք ցույց տան իրենց խոսակցի ասույթների բովանդակությանը: Սա նախապայման է այն բանի, որ աշակերտը ըմբռնի խոսակցության առարկայի բովանդակությունը և համապատասխան երկ-

խոսությունների հիմնական արտահայտությունները: Հետագայում աշակերտները կարողանում են թեմաների շուրջ (երկիր, ընտանիք, դպրոց և այլն) հաղորդում կատարեն, միևնույն ժամանակ հասկանալ իրենց ուսուցչի և ընկերների հաղորդումների բովանդակությունը և բովանդակության վերաբերյալ հարցեր ձևակերպել:

+ Weißt du es? Ich habe in den Sommerferien meine Tante in Deutschland besucht.

– Was du nicht sagst! Das ist aber toll. Erzähle bitte über deine Ferien!

+ Es war einfach super! Ich bin viel gereist, habe viel Deutsch gesprochen.

Աշակերտը պետք է կարողանա լուծել տեղեկատվության և կարծիքների փոխանակման խնդիրները՝ հարցեր տալ, խնդրել, խնդրանքը հիմնավորել, առարկություններ անել:

ա) Մենախոսություն (Monolog)

Մենախոսությունը կամ պատմելը նկարագրություն է, հաղորդում լսածի կամ կարդացածի մասին, վերաբերմունք հաղորդվող տեղեկությանը:

Պատմելու համար անհրաժեշտ են գաղափարներ և

մտահաղացումներ: Դպրոցական պայմաններում պատմելը, երկխոսությունների, մենախոսությունների ձևակերպումը ստեղծագործական աշխատանք է: Խոսքային գործունեության տարբեր տեսակները ձևավորվում են նախ բառային և հետո խոսքային վարժությունների օգնությամբ: Խոսքային վարժությունները կատարելիս, ինչպես արդեն նշվեց, աշակերտի հիմնական ուշադրությունը բևեռվում է պատմվող տեքստի, երկխոսության կամ մենախոսության բովանդակության վրա: Միշտ չէ, որ աշակերտը ամբողջական պատմություն կազմելու մտահղացում է ունենում: Ուսուցիչը պետք է գաղափար տա, սովորեցնի աշակերտին պատմությունըհասցնել ավարտին: Ընդ որում, պատմության ավարտըպետք է համապատասխանի պատմության սկզբին, և ավարտըպետք է բերի այն սպասումներին, որոնք թելադրել է պատմության սկիզբը: Երբեմն հենց ավարտն է պարունակում պատմության բուն իմաստը, այն անհրաժեշտ է ներկայացնել հատկապես դիպուկ և ակնառու:

Ուսուցիչը կարող է ինքը նախապատրաստել կամ էլ հանձնարարել աշակերտներին պատմության զարգացման և շարադրման պլանը նախապատրաստել տանը: Դրան հասնելու համար պետք է ելնել պատկերավոր ներկայացված որևէ իրադրությունից և մտածել այն մասին, թե ինչ

կարող էր նախորդել կամ էլ հաջորդել այդ իրադրությանը:

Մենախոսությունը նկարագրություն է, հաղորդում լսածի կամ կարդացածի մասին, վերաբերմունք հաղորդվող տեղեկության նկատմամբ կամ դրան տրվող գնահատականը:

Մենախոսության ձևակերպումը ստեղծագործական աշխատանք է. այն ներկայացնելու կարողություններն ու հմտությունները ձևավորվում են նախ բառային և ապա խոսքային վարժությունների կատարմամբ: Խոսքային վարժությունները կատարելիս աշակերտի ուշադրությունը կենտրոնացվում է մենախոսության բովանդակության վրա:

Համապատասխան վարժությունները նպաստում են լեզվական կարողությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, որոնք իրենց հերթին հիմք են հանդիսանում խոսքային հմտությունների զարգացման համար:

Խոսքային հմտությունների և կարողությունների զարգացմանն են ուղղված նաև տեքստերը և նրանց ուղեկցող վարժությունները: Վարժությունները նպաստում են, որպեսզի ձևավորվեն և ավտոմատացվեն լեզվական գործողություններ կատարելու կարողությունները, որոնք էլ իրենց հերթին հիմք են հանդիսանում խոսքային հմտությունների զարգացման համար: Վարժություններն ունեն հաղորդակցական ուղղվածություն, նրանց նպատակն օտար լեզուն

որպես հաղորդակցման միջոց օգտագործելն է: Հաղորդակցական նպատակը աշակերտի տվյալ թեմայի շրջանակներում խոսքային գործունեություն ծավալելու կարողությունն է, որը պահանջում է համապատասխան խոսքային ունակություններ, որպեսզի խոսողը ուշադրությունն առանց լեզվական կողմի վրա սևեռելու կարողանա ըստ իրադրության անհրաժեշտ տեղեկություն ընկալել կամ էլ անհրաժեշտ միտք հաղորդել: Անցած նյութի ավտոմատացմանն են ուղղված այնպիսի վարժություններ, ինչպիսիք են, օրինակ՝ "Bildet Sätze nach dem Beispiel!", „Macht es wie im Beispiel“, „Was passt in die Lucken?“ և բառապաշարի ամրապնդմանն ուղղված այլ վարժություններ. "Setzt das passende Wort ein!" "Wie heißt das Gegenteil?"

Խոսքային հմտությունների զարգացման գործում կենտրոնական տեղ է զբաղեցնում ընթերցանական տեքստերի վրա աշխատանքը, որոնց նախորդում և հաջորդում են նոր ներմուծված բառերի (բառապաշարի) հետ կապված վարժությունները:

Այդ վարժություններն ակտիվացնում են բառապաշարը որոշակի քերականական կաղապարների մեջ: Աշակերտները այսպիսով արդեն որոշակի գիտելիքներով աստիճանաբար „մոտենում“ են տեքստի բովանդակությանը:

Տեքստը և նրան հաջորդող վարժությունները նպաստում են աշակերտների խոսքի զարգացմանը, նրանց ինքնուրույն մտքեր արտահայտելու, առաջարկվող թեմաները մեկնաբանելու և թեման քննարկելու կարողության զարգացմանը: Տեքստին հաջորդող վարժություններն ու առաջադրանքները բազմազան են: Նրանցից մի քանիսը կարելի է կատարել բանավոր, իսկ մյուս մասը համապատասխան վարժանքից հետո հանձնարարել գրավոր: Վարժությունների հերթականությունը, ինչպես այն տրված է դասագրքում, պարտադիր չէ պահպանել: Ուսուցիչը կարող է դրանք փոխել ըստ իր առջև դրված առաջնայնությունների:

Մենախոսության զարգացման համար կարող են օգտագործվել վաղօրոք նախապատրաստված վարժություններ, ինչպես որևէ մտքի վերարտադրումը որոշակի փոփոխություններով, օրինակ՝ տեքստի վերապատմումը քերականական դեմքի փոխակերպումով (a) Sona sagt:„Ich habe neue Freunde“; b) Peter erzählt: "Sona hat neue Freunde" ...) կամ կազմել կապակցված խոսք նախօրոք տրված բառերի, բառակապակցությունների շուրջ, օրինակ՝ Was lernst du in der Schule? Folgende Wörter helfen dir: zeichnen, basteln, rechnen, singen, malen, lesen, schreiben, Deutsch sprechen:

Պատմելու ստեղծագործական կողմի զարգացմանը առավելապես նպաստում են կարդացածի հիման վրա նմանատիպ իրադրության ստեղծումը կամ կարդացածի վերաբերյալ սեփական դատողության և վերաբերմունքի հիմնավորումը, ինչպես նաև հանպատրաստից մենախոսական վարժություններ կազմելը, օրինակ, ամբողջական տեքստի կամ առանձին պարբերությունների վերնագրումն ու հիմնավորումը.

"Gebt dem Text einen anderen Titel!"

"Betitelt den Text und die einzelnen Absätze!"

Պատմելու արդյունավետ ուսուցմանը մեծապես նպաստում է նաև աշակերտների նկարագրելու ունակությունների զարգացումը:

Եթե աշակերտը ցանկանում է որևէ առարկա, անձ կամ երևույթ նկարագրել, ապա պետք է բացատրի.

– Ի՞նչ նպատակով է օգտագործվում առարկան:

– Ի՞նչ տեսք ունի առարկան:

– Ի՞նչ է իրենից ներկայացնում այդ երևույթը:

Օր.՝

Beschreibt einen Beruf. Und die anderen raten den Beruf.
(Lektion: Beruf)
Ordnet den Wörtern die Bilder zu! (**Lektion: Gesundheit**)

Եթե աշակերտըցանկանում է տեղեկանալ որևէ մեկի

կամ որևէ առարկայի ու երևույթի մասին, կարող է տեղեկանալ նկարներից և տեքստերից, հանրագիտարաններից, բառարաններից: Տեղեկություն ստանալուն օգնում են հարցական բառով հարցական նախադասությունները՝ W-Fragen: wer, wo, wann, was, wie, warum, wohin, wie lange, wie oft):

Դասի արդյունավետությանը նպաստում են բոլոր տեսակի լեզվական, դիդակտիկ (զննական) և տեխնիկական միջոցները (ձայնագրիչ, համակարգիչ, հեռուստացույց և այլն), որոնց հետևողական օգտագործումը հնարավորություն է տալիս տեսողական և լսողական բազմապիսի միջոցներով ներգործելու աշակերտների հոգեբանության վրա, բարձրացնելու նրանց սովորելու ակտիվությունը, կենտրոնացնելու ուշադրությունը և շարժելու հետաքրքրությունը:

Դասագրքերում տեղ են գտել առաջադրանքներ և վարժություններ, որոնք զարգացնում են աշակերտների երևակայությունը և նրանց՝ անձ, առարկաներ ու երևույթներ նկարագրելու ունակությունները: Տրվում է նկարների որոշակի շարք, որոնք նկարագրելով աշակերտը վերջում ստանում է կապակցված պատմություն.

– Übung: Hier sind die Bilder durcheinandergeraten. Bringt die Bilder in die richtige Reihenfolge!

բ) Երկխոսություն(Dialog)

Խոսքային գործունեության մյուս ձևը երկխոսությունն է: Երկխոսությունը նյութի մատուցման, ամրապնդման և ստուգման միջոց է: Երկխոսության նպատակը պետք է լինի սովորեցնել աշակերտներին այս կամ այն թեմայի շուրջ զրույց վարել՝ օգտագործելով հարցեր, խնդրանք, հորդոր, հրաման, հրավեր, պատասխան վերաբերմունք, մերժում:

Ուսուցիչը սկզբում ուղղորդում է աշակերտներին երկխոսություններ վարելիս.

– փորձում է բոլոր աշակերտներին դարձնել երկխոսության մասնակից:

– Հետևում է երկխոսության ընթացքին:

– Ուշադրություն է դարձնում այն բանին, որ պահպանվեն երկխոսության հաղորդակցական կանոնները:

– Երկխոսությանը նոր ազդակներ է տալիս:

– Հետևում է, որ երկխոսության նպատակը իրագործվի: Երկխոսությունը նպատակին է ծառայում, եթե բոլոր մասնակիցները մի ընդհանուր թեմայի մասին են խոսում և աշ-

խատում են մնալ թեմայի սահմաններում: Շեղումները կարող են խաթարել երկխոսությունը: Աշակերտները կարող են երկխոսական քայլերը ճիշտ կազմակերպել միայն այն ժամանակ, եթե մասնակիցները ուշադիր լսում են միմյանց: Տարբեր հնարավորություններ կան մյուս մասնակիցների առաջարկների հետ համաձայնելու կամ մերժելու դրանք.

– համաձայնություն (Du hast Recht. Das stimmt.),

– մերժում (Das stimmt nicht. Ich denke nicht so.),

– սահմանափակ համաձայնություն (Das stimmt, aber... Das stimmt, aber leider…),

– սահմանափակ մերժում (Nein, aber…),

Խոսողի և լսողի համար կարևոր է ճիշտ հիմնավորել իր մերժումը կամ համաձայնությունը:

ա) սահմանափակ մերժում

- Gehen wir am Samstag schwimmen?

- Schade, das kann ich nicht, denn ich habe am Samstag Musikunterricht.

- Und am Montag?

- Am Montag geht es.

բ) սահմանափակ համաձայնություն

- Spielst du am Montagnachmittag auch Volleyball?

- Nein, nur am Vormittag.

- Gehen wir dann am Nachmittag schwimmen?

- Ja. Wie oft gehst du schwimmen?

- Zweimal in der Woche.

- Da kann ich öfter mitkommen.

- Ja, gern.

Երկխոսության ուսուցման մեջ մեծ նշանակություն ունի դերերով խաղը: Ուսուցիչնինքը կարող է ստեղծել խաղային իրադրություններ, օրինակ՝

– Ներկայացրո՛ւ ընկերոջդ:

– Զրուցե՛ք կատարած ճամփորդության մասին:

– Զրուցեք մարզական թեմայի շուրջ:

– Warum spielst du nicht Tennis?

- Ich habe keine Lust.

- Warum magst du den Mathematikunterricht nicht?

- Der Lehrer ist langweilig.

Երկխոսությունները ցույց են տալիս, թե ինչպես են լեզվակիրները հաղորդակցվում որոշակի իրադրություններում (բժկի մոտ, գրադարան, դպրոց, ճամփորդություն, ընկերների շրջան և այլն): Երկխոսությունների զարգացմանն ուղղված վար-

ժությունների շարքում կարելի է նշել երկխոսության ծավալում տրված նկարի շուրջ՝ հենվելով երկխոսության սկիզբ հանդիսացող արտահայտությունների վրա, ինչպես նաև երկխոսության կազմակերպում ըստ տրված նմուշի և տեքստում գործող անձանց.

Lest den Dialog! Spielt ähnliche Dialoge!

Stellt Minidialoge zusammen!

Ունկնդրում (Hören)

Ունկնդրումը՝ որպես խոսքային գործունեության ռեցեպտիվ տեսակ, ուսուցման նպատակ է և կարևոր միջոց: Նրա կազմակերպված ուսուցումը բարենպաստ պայմաններ է ստեղծում աշակերտների բանավոր խոսքի կարողությունները զարգացնելու համար: Փորձը ցույց է տալիս, որ օտար լեզվով խոսքի ընկալումը շատ հաճախ ավելի մեծ դժվարություն է ներկայացնում, քան օտար լեզվով խոսելը:

Ունկնդրելիս աշակերտը պետք է կարողանա տարբերակել հնչյունները, հնչյունային կապակցությունները, բառերը, նախադասությունները, հասկանա առանձին ծանոթ բառեր, խոսքային նմուշներ, հասկանա ուսուցչի և ընկերների խոսքը, դասերի ընթացքում օգտագործվող հիմնական արտահայտությունները, ուսուցչի պարզ հարցերը և հրահանգները և արձագանքել դրանց:

Օտար լեզվով խոսքի ունկնդրումը գործածության մեջ է

դնում ոչ միայն ակտիվ, այլ նաև ընթերցանությունից ձեռք բերած պասիվ բառապաշարը:

Դասագրքում տեղ գտած որոշ վարժություններ ուսուցիչը կարող է օգտագործել ունկնդրելու կարողությունների զարգացման համար:

Առութենտիկ տեքստերի ունկնդրմանը զուգընթաց ուսուցիչը կարող է տեքստի բարձրաձայն ընթերցումից հետո հանձնարարել աշակերտներին՝

– տրամաբանորեն լրացնել նախադասությունը,

– գտնել նկարի և լսած նախադասությունների համապատասխանությունը և անհամապատասխանությունը,

– լսել տեքստը, վերնագրել այն,

– լսել տեքստը՝ ուշադրություն դարձնելով առանձին փաստերի վրա, այնուհետև պատասխանել ուսուցչի հարցերին,

– լսել տեքստը և թվարկելլ բոլոր փաստերը, գտնել գլխավոր միտքը,

– բաժանել տեքստը ավարտված իմաստային մասերի և յուրաքանչյուր մասը վերնագրել:

Ընթերցանություն (Lesen)

Ընթերցանության ուսուցման նպատակը աշակերտների ինքնուրույն տեղեկատվություն ստանալու կարողությունների ձևավորումն է:

Ընթերցանության ունակությունը պետք է այնպես զարգացնել, որ աշակերտը պարզ, կարճ տեքստերը հեշտությամբ կարդա, իսկ ավելի դժվարներին, որոնց բառապաշարը դեռևս ծանոթ չէ, բառարանով ծանոթանա ու հասկանա:

Ընթերցանությունն ունի ճանաչողական արժեք: Ընթերցելով աշակերտը՝ տեքստից որոշակի երկրագիտական տեղեկատվություն է ստանում, ծանոթանում է ուսումնասիրվող լեզվի երկրի բարքերին ու սովորույթներին, հայտնի մարդկանց կյանքին և գործունեությանը: Ընթերցանության համար ընտրված են հետաքրքրաշարժ սյուժեներով պատմվածքներ, բանաստեղծություններ, նամակներ, երկխոսություններ: Տեքստերի ճիշտ ընտրությունը հնարավորություն է ստեղծում իրականացնել ընթերցանության իմացական, կրթական և ճանաչողական նպատակները:

Դասագրքում զետեղված տեքստերը կարող են նյութ ծառայել ընթերցանության տարբեր տեսակների զարգացման համար, մասնավորապես լուռ, փնտրողական ընթերցանության (տեքստում գտնել այն հատվածը, որտեղ խոսվում է ինչ–որ բանի մասին, որտեղ նկարագրվում է որևէ բան կամ բնութագրվում է որևէ մեկը), թռուցիկ ընթերցանության (որոշել, ինչի մասին է տեքստը): Ուսուցիչը պետք է աշակերտին սովորեցնի ընթերցանության տեքստերը արագ կարդալ և կարողանալ դրանք մանրամասն վերլուծել: Կարդալու ընթացքում կարևոր է ոչ միայն նյութի ճիշտ ընկալումը, այլ նաև աշակերտի ուշադրության

կենտրոնացումը: Դասագրքերում տեղ են գտել վարժություններ և առաջադրանքներ, որոնք նպաստում են արագ ընթերցանությանը:

Beantwortet die Fragen zum Textinhalt!

Welche Sätze entsprechen dem Textinhalt nicht?

Lest den Text und findet für den Text einen Titel!

Was passt hier nicht?

Wie heißt es im Text?

Was gehört zusammen?

Գրելը (Schreiben)

Գրելը խոսքային գործունեության ակտիվ տեսակ է: Մտքերը գրավոր արտահայտելը միայն ուսուցման միջոց չէ: Աշակերտները սովորում են ոչ միայն կարճ հաղորդումներ անել, այլ նաև կարողանալ իրենց հաղորդումներով անձնական գրություններ, նամակներ, հրավերներ ձևակերպել: Օտար լեզվով նամակ գրելու կարողության զարգացումըբխում է ուսուցման գործնական նպատակներից, ինչը արտահայտվում է ոչ միայն գրավոր առաջադրանքների կատարման մեջ, այլ նաև առանձին տեքստային կառույցների նախապատրաստական վարժություններում:

Օր.՝ Schreibt über eine Wanderung.

Schreibt einen Brief an deinen Freund.

Berichtet über eure Reise.

Գրելու վարժությունները միաժամանակ զարգացնում են բանավոր խոսքի կարողությունները:

Դասագրքում գրեթե յուրաքանչյուր դաս ավարտվում է ամփոփիչ թարգմանությամբ, որի օգնությամբ ստուգվում է աշակերտների կողմից բառապաշարի և քերականական կառույցների յուրացման աստիճանը:

Աշխատանք տեքստի հետ (Textarbeit)

Խոսքային գործունեության բոլոր տեսակների զարգացման համար կարևոր նշանակություն ունի աշխատանքը տեքստի հետ:

Տեքստերը բազմաբնույթ են. կարճ պատմություններ, նկարագրություններ, երկխոսություններ, նամակներ, բանաստեղծություններ, հեքիաթներ, պարզ տեղեկատվություններ, շնորհավորական բացիկներ և այլն:

Բոլոր տեքստերին հաջորդում են տեքստի բովանդակությանը վերաբերող հարցեր, որոնցով ստուգվում է աշակերտի տեքստը հասկանալու

կարողությունը: Տեքստի հետ տարվող աշխատանքներից են նաև հետևյալ առաջադրանքները.

- գտնել տրված պատասխաններից ճիշտ տարբերակը,

Lektion: Reise

Was ist richtig?

1. Am Wochenende will die Familie Lehmann

a) einen Kinobesuch

b) einen Ausflug machen.

c) eine Geburtstagsparty

2. Die Familie will a) mit dem Bus

b) mit dem Auto fahren.

c) mit dem Zug

3. Die Kinder packen a) die Reisetasche.

b) den Koffer.

c) den Picknickkorb.

4. Die Familie kommt a) spät am Abend

b) am Morgen zurück.

c) am nächsten Tag

- տեքստի վերաբերյալ տրված նախադասություններից ընտրել ճիշտը, այսպես՝

Lektion: Tiere

Was ist richtig?

1. Die Raubtiere wohnen im Bauernhof.
2. Der Nationalpark liegt im Süden der Schweiz.
3. Das Murmeltier lebt im Zoo.
4. Das Murmeltier schläft das ganze Jahr.
5. Das Wort “murmeln” bedeutet deutlich sprechen.

- նախադասությունները դասավորել ըստ տեքստի բովանդակության, օր.

Bringt die Sätze in die richtige Reihenfolge!

1. Das Wasser in der Ostsee ist nicht warm.
2. Mein Bruder Markus war auch mit uns.
3. Hoffentlich fahren wir nächstes Jahr wieder an die Ostsee.
4. Das Ferienhaus war groß, aber ein bisschen alt.
5. Meine Eltern sind mitgefahren.
6. Das Ferienhaus lag neben einem Bauernhof.
7. Ich möchte von meiner Fahrt erzählen.
8. Am Strand haben wir oft Muscheln gesucht.

- պատասխանել տեքստի բովանդակությանը տրվող հարցերին,

Lektion: Tiere

Beantwortet die Fragen zum Text.

1. Wo wohnt Sona in diesem Sommer?
2. Wem schreibt Sona einen Brief?
3. Welche Tiere hat die Oma auf ihrem Bauernhof?
4. Was machen Sona und ihre Kusine auf dem Bauernhof?

Դասագրքերում զետեղված բոլոր տեքստերի

բովանդակության վերաբերյալ տրվում են հարցեր: Տեքստի բովանդակությունը հասկանալու ստուգմանն են ուղղված նաև այնպիսի առաջադրանքներ, ինչպես նկարները դասավորել տեքստի բովանդակությանը համապատասխան:

Օր.՝ Bringt die Bilder in die richtige Reihenfolge! /Lektion: Reise/

ԼԵԶՎԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հնչյունաբանություն (Phonetik)

Հնչյունաբանության ուսուցման հիմնական նպատակը լսաարտասանական հմտությունների ձևավորումն է:

Արտասանական հմտությունները խոսելու, ունկնդրելու և ընթերցանության մաս են կազմում: Բանավոր և գրավոր խոսքը զարգացնելու համար սովորողները պետք է տիրապետեն արտասանական հմտություններին:

Դասագրքերի դասերի մեծ մասում տրվում են արտասանական վարժություններ:

Lektion: Reise

-Sprecht nach!

a) 'fahren, 'Fahrt, 'Fahr,plan, 'Fahr,karte, 'Fahr,rad

b) 'Picknick, 'packen, 'einpacken

Lektion: Reise

-Sprecht nach.

´absteigen

ent´decken

er´reichen

interess´ieren

´schmecken

Բառապաշար (Wortschatz)

Բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրը տեքստն է: Տեքստում հանդիպող անծանոթ բառերը, որոնք նախատեսված են հիմնականում ակտիվ յուրացման համար, նախօրոք բացատրվում են գերմաներենով, հաճախ փոքրիկ իրադրություններ-ի մեջ: Այդ բառերն ամրապնդվում են տեքստից առաջ մեկ կամ երկու վարժությունների օգնությամբ և ապա հետագա վարժություններում՝ քերականական նյութին զուգընթաց: Գիրքն ունի տարբեր բնույթի վարժություններ և առաջադրանքներ, որոնք ուսուցչին հնարավորություն են տալիս ավելի հետաքրքիր և աշ-

խույժ դարձնել բառապաշարի ներմուծմանն ու ամրապնդմանը ուղղված աշխատանքը: Վարժությունների տեսակներն անընդհատ փոփոխվում են: Աշակերտը ուսուցչի օգնությամբ լսելուց անցնում է խոսելուն, քերականական վարժություններից՝ տեքստի վերաբերյալ հարցերին, կարճ երկխոսություններից՝ մենախոսությանը և վերջապես նախադասության հնչերանգին: Բառիմաստը բացատրելիս ուսուցիչը կարող է դիմել լեզվական և ոչ լեզվական տարբեր եղանակների.

– զննական՝ դասագրքեում տեղ գտած նկարների միջոցով՝ շարժուձևով, միմիկայով,

– բառիմաստի բացահայտում ծանոթ բառերի միջոցով (der herrlich ≈ sehr gut, sehr schön

der Teich- ein kleiner See

– հոմանիշների (anfangen–beginnen),

– հականիշների (kalt–warm, hoch–niedrig և այլն),

– բառակազմական տարրերի վերլուծության միջոցով (Bergwanderung, Haustier, Kleiderschrank):

Անհրաժեշտության դեպքերում կարելի է դիմել թարգմանությանը: Հատուկ բառակազմական միջոցներով ուսուցիչը աշակերտներին սովորեցնում է կազմել նոր իմաստներով նոր բառեր, օրինակ՝

Arbeits– Bade–

Wohn– -zimmer

Schlaf- das Kinder–

Բառապաշարի ներմուծմանն ու ընդարձակմանն է ծառայում նաև երկրագիտական գիտելիքների հաղորդումը, որի ժամանակ չի պահանջվում բոլոր նոր բառերի ակտիվ տիրապետում: Բառապաշարի ուսուցումը հող պետք է նախապատրաստի խոսքային հմտության ձևավորման համար:

Քերականություն (Grammatik)

Քերականությունը լրացնում է ուսուցչի բացատրությունները, և նյութն ամրապնդելու համար տրվում են վարժություններ: Քերականությունը կարելի է ներմուծել օրինակներով, կաղապարներով: Քերականական նյութը ներմուծելիս կարելի է դիմել ինչպես դեդուկտիվ, այնպես էլ ինդուկտիվ եղանակին՝ կապված ուսուցանվող քերականական նյութի յուրահատկության հետ: Կաղապարներով ուսուցումըհնարավորություն է տալիս յուրացնել նախադասության կամ քերականական մեկ այլ երևույթի կառուցվածքը, ինչըմեծացնում է աշակերտի ըստ կաղապարի բազմաթիվ օրինակներ կազմելու ներունակ հնարավորու-

թյունները.

Wem hilft er? – Er hilft mir. (Dat.)

Wen sucht sie? – Sie sucht die Schwester. (Akk.)

Քերականական նյութը հիմնականում տրվում է նախ կաղապարով և հետո ամրապնդվում համապատասխան տեքստի և դրան հաջորդող վարժությունների տարբեր տիպերի մեջ. շղթայաձև վարժություններում, կարճ երկխոսություններում: Նման իրադրություններում աշակերտները, մինչ նոր քերականական ձևերի նշանակությունն ու դրանց կիրառումը խոսքի մեջ յուրացնելը, կրկնում են տվյալ քերականական նյութը:

Տարբեր խոսքի մասերի ներմուծման խնդիրը հաճախ առաջանում է այն պատճառով, որ աշակերտը ոչ միայն պետք է կարողանա ընդհանուր բառանյութով ներկայացնել նախադասության կառուցվածքը, այլ նաև ճանաչել խոսքի մասերը: Խոսքը ոչ թե միայն, օրինակ, գոյականի ճիշտ հոլովման, այլ նաև խոսքի մեջ ձևերի ճիշտ օգտագործման մասին է:

Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ գերմաներենում բայը կենտրոնական դեր է կատարում և որ գերմաներենին ներհատուկ է նախադասության մեջ ստորոգյալի խոնարհվող մասի հաստա-

տուն տեղը: Աշակերտներին գերմաներենի պատմողական նախադասության մեջ բայի դիրքը բացատրելու համար ուսուցիչը ներմուծում է քերականական նյութը և բառապաշարը սխեմաների միջոցով, որոնցում ակնառու կերպով առանձնացվում է բայի դիրքը:

Նույնը վերաբերում է նաև երկրորդական նախադասության մեջ բայի դիրքին: Սխեմայի ձևով տրվում է երկրորդական նախադասության շարադասությունը և այն ամրապնդվում է բազմաթիվ վարժությունների մեջ (dass–Sätze):

Գերմաներենում մեծ դժվարություն է ներկայացնում բայերի խնդրառությունը: Առանձնահատուկ շեշտ է դրվում այն բայերի վրա, որոնց խնդրառությունը տարբերվում է հայերենից: Ուսուցիչը պարբերաբար անդրադառնում է բայերի խնդրառությանը.

հպարտանալ մի բանով, մեկով – stolz sein auf (Akk.)

սպասել ինչ–որ մեկին, մի բանի – warten auf (Akk.)

խնդրել մեկից մի բան – bitten Akk, um (Akk.):

Փորձը ցույց է տալիս, որ քերականական նյութի ներմուծման ժամանակ առանձնահատուկ դժվարություն են ներկայացնում ժամանակաձևերը: Ստորև տրվում է գերմաներենի ժամանակաձևերի օգտագործման աղյուսակ, որտեղ այդ ժամանակաձևերը զուգադրվում են հայերենի հա-

մապատասխան ժամանակաձևերի հետ և որը, կարծում ենք, էապես կհեշտացնի ուսուցչի աշխատանքը վերոհիշ-յալ քերականական նյութի բացատրման ժամանակ:

ժամա-նա-կաձև	ձև/օրինակ	նշանակություն	հայերենի համարժեք-ները
Präsens	1. Es schneit heute. 2. Jerewan ist die Hauptstadt von Armenien. 3. Morgen fliegt er nach Berlin. 4. Plötzlich kommt der Wolf zum–Rotkäppchen.	1. Այն, ինչ այժմ տեղի է ունենում: 2. Այն, ինչ տևական է, մշտապես գործում է: 3. Այն, ինչ տեղի է ունենալու ապագայում: 4. Անցյալի պատմության ներկայացում:	Ներկա ժամանակ
Perfekt	1. Der Wolf hat die Großmutter gefressen. 2. Er hat den Aufsatz schon geschrieben.	1. Անցած, բանավոր պատմություն: 2. Այն, ինչ ավարտված է և առկա է ներկա արդյունքը:	Վաղակատար ներկա
Präteritum	1. Es war	1. Ճշմարիտ կամ	Անցյալ կատարյալ

	einmal ein König. 2. Die Schüler gratulierten einander zum Weihnachtsfest	հորինված պատմություն անցյալում: 2. Անցյլալում տեղի ունեցած իրադարձությունների վերարտադրություն կամ նկարագրում:	կամ անցյալ անկատար Անցյալ անկատար
Futurum	1. Das Konzert wird im Konzertsaal stattfinden. 2. Er wird wohl um diese Zeit zu Hause sein.	1. Այն, ինչ տեղի է ունենալու ապագայում: 2. Ենթադրություն (wohl, vielleicht):	Ապառնի

Աշակերտների ուշադրությունն անհրաժեշտ է հրավիրել այն հանգամանքի վրա, որ հայերենի և գերմաներենի ժամանակաձևերըբազմիմաստ են և որ շատ կարևոր է աշակերտներին սովորեցնել թարգմանության ժամանակ ժամանակաձևերի հայերեն համարժեքները կռահել նաև համա-

տեքստից:

5–րդ դասարանում տեղ է գտել ածականների ձևաբանական և քերականական կարգերի նկարագրությունը, հատկապես ածականի գերադրական աստիճանը: Ածականները հատկանիշներ են արտահայտում: Ուսուցիչը սովորեցնում է աշակերտներին ածականների օգնությամբ հատկանիշներ վերագրել առարկաներին, մարդկանց, երևույթներին և ածականի օգնությամբ սաստկացնել առարկայի հատկանիշները: Դա կատարվում է ածականի համեմատության աստիճանների միջոցով:

Ist das Wohnzimmer größer als das Schlafzimmer?

Գրեթե բոլոր դասերի վերջում զետեղված են հումոր, հանելուկներ, ասացվածքներ, խաղեր և երգեր, որոնք մեծապես նպաստում են դասերս հետաքրքիր դարձնելուն:

Գերմաներենի նշված դասագրքի մեջ տեղ գտած դասերի հետագա վերլուծությունը մեթոդական ձեռնարկի տեսական նյութի տրամաբանական շարունակությունն է:

Դասապրոցեսի կազմակերպման սոցիալական ձևեր

Ուսումնական գործընթացը կարելի է կազմակերպել անհատական, զույգերով կամ խմբային աշխատանքների ձևով:

1.Անհատական գործունեությունը դրսևորվում է սովորողի թե՛ դասարանական, թե՛

արտադասարանական աշխատանքների եղանակներով:

2. Զույգերով և խմբային աշխատանքը դասարանում ավելի արդյունավետ է դարձնում

հաղորդակցական կարողությունների զարգացումը:

Անհրաժեշտ պայմաններն են՝ ազատ հաղորդակցումն ու շփումը, դիմացինին լսելու, հասկանալու, մտածված պատասխան տալու կարողությունը, հանդուրժողա-կանությունը, համագործակցությունը, իր և խմբի անդամների ուսումնառության, աշխատանքի և հաջողության համար պատասխանատվությունը:

Նախագծային աշխատանք

Արտադասարանական աշխատանքը սովորողի պլանավորված գործունեությունն է դասապրոցեսից դուրս՝ մանկավարժի ուղղորդմամբ, այն ենթադրում է աշակերտի գործունեության ինքնակազմակերպում, ինքնակառավարում և ինքնավերահսկում:

Այս առումով նշանակալի դեր է հատկացվում դասագրքում նախագծային աշխատանքի տեսակին, որի շրջանակներում աշակերտների խումբը ստանում և կատարում է ինքնուրույն առաջադրանք, որի արդյուքները ներկայացվում են դասի ընթացքում: Այս աշխատանքի տեսակը ձևավորում է հետազոտական, հաղորդակցման և համագործակցության հմտություններ:

Նախագծային աշխատանքը նպաստում է սոցիալական իրազեկության ձևավորմանը, աշակերտին դարձնում է շփվող, թիմում աշխատելու ունակ և ստեղծագործ:

Projektarbeit

<u>Merkmale der Projektarbeit:</u>

- Einheit von Theorie und Praxis

- Integration von Fächern und Methoden
- Lernen mit allen Sinnen und im natürlichen Lernkontext
- Soziales Lernen in Gruppen
- Selbständiges Handeln bzw. selbst organisiertes Arbeiten
- Produktorientierung
- Selbstevaluation

Mögliche Themenbereiche:

- Berichte über Ereignisse, Situationen, Persönlichkeiten
- Erforschen von Lebensstilen, Lebensgewohnheiten verschiedener Personen
- Biographien von bekannten Menschen in der Stadt, in der Region, im Dorf…

Mögliche Projektprodukte:

- Wandzeitungen
- Homepage
- Textreportagen
- Foto-, Audio-, Video-Reportagen
- Rollenspiele

Phasen der Projektarbeit:

a) Themenfindung

b) Gruppenfindung

c) Vorbereitung der Erkundung

d) Durchführung der Erkundung

e) Vorbereitung der Präsentation

f) Präsentation

g) Evaluation

Թարգմանություններ(որպես առաջարկ)

Lektion: Hobby

1. Եղբայրս սիրում է երաժշտություն լսել: Դա նրա սիրած զբաղմունքն է:
2. Իմ ընկեր Ալեքսը լավ կիթառ է նվագում:
3. Շաբաթվա վերջին ուզում ենք շրջագայել սարերում: Կգա՞ս մեզ հետ:
4. Հանկարծ երեխաները մի աղբյուր հայտնաբերեցին:
5. Իմ ընկերները երեկոյան հասան սարի գագաթին:

1. Mein Bruder hört gern Musik. Das ist sein Hobby.
2. Mein Freund Alex spielt gut Gitarre.
3. Am Wochenende wollen wir eine Bergwanderung machen. Kommst du mit?
4. Plötzlich entdeckten die Kinder eine Quelle.
5. Meine Freunde erreichten am Abend den Berggipfel.

…….

1. Հայկն ունի սիրած զբաղմունք: Նա սիրում է ձուկ որսալ:
2. Ազատ օրերը մենք անցկացնում ենք ամառանոցում:
3. Մեր ամառանոցը լճակի մոտ է:
4. Այսօր տղաների բախտը բերում է: Նրանք երեք ձուկ են բերում տուն:
5. Ուզո՞ւմ ես ճաշից հետո շախմատ խաղալ:
6. Ես սիրում եմ կիթառ նվագել: Դա իմ սիրած զբաղմունքն է:

1. Hayk hat ein Hobby. Er fischt gern.
2. Das Wochenende verbringen wir im Wochenendhaus.

3. Unser Wochenendhaus liegt am Teich.
4. Heute haben die Jungen Glück. Sie bringen drei Fische nach Hause.
5. Ich spiele gern Gitarre. Das ist mein Hobby.

Lektion: Beruf

1. Ճարտարապետը նկարում է և կառուցում է տներ:
2. Բժիշկը օգնում է մարդկանց: Նրա աշխատանքը կարևոր է:
3. Դավիթի հայրը օդաչու է: Աշխատանքը նրան դուր է գալիս:
4.Սոնայի մորաքույրը շատ լավ է եփում ու թխում: Նա խոհարարուհի է:
5. Ենոքի եղբայրը երաժիշտ է: Նա կիթառ է նվագում:

1. Der Architekt malt und baut Häuser.
2. Der Arzt hilft den Menschen. Seine Arbeit ist wichtig.
3. Davits Vater ist Pilot. Die Arbeit gefällt ihm gut.
4. Sonas Tante kocht und bäckt gut. Sie ist Köchin.
5. Enoks Bruder ist Musiker. Er spielt Gitarre.

……..

Ի՞նչ է քո հորեղբայրը մասնագիտությամբ: - Նա ինժեներ է:
2.Իմ ընկերը լավ է սովորում կենսաբանություն, քանի որ ուզում է դառնալ բժիշկ:
3.Իմ քույրը լավ է նկարում: Նա ուզում է դառնալ

նկարչուհի:
4. Ես կարում եմ շորեր իմ տիկնիկի համար:
5.Զբաղվո՞ւմ ես ամեն օր սպորտով: Դա առողջարար է:

1. Was ist dein Onkel von Beruf? – Er ist Ingenieur.
2. Mein Freund lernt gut Biologie, denn er möchte Arzt werden.
3. Meine Schwester malt gut. Sie möchte Malerin werden.
4. Ich nähe Kleider für meine Puppe.
5. Treibst du jeden Tag Sport? Das ist gesund.

Lektion: Wohnen

1. Մեր բնակարանը մեծ է և լուսավոր:
2. Ձեր բնակարանը խոհանոց ունի՞:
3. Հյուրասենյակում քույրս հեռուստացույց է նայում:
4. Այգում երեխաները ֆուտբոլ են խաղում:
5. Պատշգամբում սիրում եմ գիրք կարդալ:

1. Unsere Wohnung ist groß und hell.
2. Hat eure Wohnung eine Küche?
3. Im Wohnzimmer sieht meine Schwester fern.
4. Im Garten spielen die Kinder Fußball.
5. Ich lese gern auf dem Balkon.

……

1. Սառնարանը դրված է խոհանոցում:
2. Ժամացույցը միջանցքում է:

3. Բազմոցը դրված է հյուրասենյակում:
4. Որտե՞ղ է դրված մահճակալը:
5. Զգեստապահարանը ննջարանում է:

1. Der Kühlschrank steht in der Küche.
2. Die Uhr ist im Flur.
3. Das Sofa steht im Wohnzimmer.
4. Wo steht das Bett?
5. Der Kleiderschrank ist im Schlafzimmer.

Lektion: Reise

1. Կիրակի օրը մենք ուզում ենք գնալ էքսկուրսիա անտառ:
2. Մենք կարող ենք մեկնել գնացքով կամ ավտոբուսով:
3. Ուղևորությունը Երևանից Գյումրի տևում է երկու ժամ:
4. Մենք ուզում ենք մեկնել ինքնաթիռով:
5. Չվացուցակում գրված է. «Գնացքը Սևան մեկնում է ժամը 12-ին»:

1. Am Sonntag wollen wir eine Waldwanderung machen.
2. Wir können mit dem Zug oder dem Bus fahren.
3. Die Fahr von Jerewan nach Gyumri dauert zwei Stunden.
4. Wir möchten mit dem Flugzeug fliegen.
5. Im Fahrplan steht: Der Zug fährt um 12 Uhr nach Sewan.

……

1. Այս ամռանը մենք ուզում ենք արձակուրդներին

Ծաղկաձորում մի տուն վարձել:
2. Լողափին երեխաները խեցիներ էին հավաքում և վոլեյբոլ խաղում:
3. Ես քաղցած չեմ: Մենք բավականին կերել ենք և խմել:
4. Անցյալ տարի նրանք հետաքրքիր ճամփորդություն են կատարել:
5. Երեխաներին դուր եկա՞վ էքսկուրսիան:

1. In diesem Sommer möchten wir in den Ferien ein Haus in Zachkadsor mieten.
2. Am Strand haben die Kinder Muscheln gesammelt und Volleyball gespielt.
3. Ich habe keinen Hunger. Wir haben genug gegessen und getrunken.
4. Letztes Jahr haben sie eine interessante Reise gemacht.
5. Hat der Ausflug den Kindern gut gefallen?

Findet das richtige deutsche Wort!

1. լողափ - die Fahrt, das Ferienhaus, die Muschel, *der Strand*
2. դուր գալ - reisen, baden, *gefallen*, sammeln
3. բավականին - interessant, *genug*, toll, hoffentlich
4. ագարակ - das Meer, das Wochenendhaus, *der Bauernhof*, die Woche
5. վարձել - spielen, einpacken, erzählen, *mieten*

1. Հայրիկը ծովափին տուն է վարձել, քանի որ մենք շուտով մեկնում ենք Բալթիկ ծով:
2. Մայրիկը հիվանդ է, այդ պատճառով չեմ կարող մասնակցել էքսկուրսիային:

3. Շաբաթվա վերջին հայրիկը մեքենայով տանելու է մեզ Գառնի:
4. Եղբայրդ ինքնաթիռո՞վ է մեկնել Բեռլին:
5. Ես սիրում եմ գնացքով ճամփորդել: Դա շատ հետաքրքիր է:
6.Այս տարի մեր ընտանիքը ուզում է հանգստանալ ագարակում:

1. Der Vater hat ein Haus am Strand gemietet, denn wir fahren bald an die Ostsee.
2. Die Mutter ist krank, deshalb kann ich nicht am Ausflug teilnehmen.
3. Am Wochenende wird uns der Vater nach Garni fahren.
4. Ist dein Bruder mit dem Flugzeug geflogen?
5. Ich reise gern mit dem Zug. Das ist sehr interessant.
6. Dieses Jahr möchte sich unsere Familie auf dem Bauernhof erholen.

Lektion: Tiere

1. Շունը և կատուն ընտանի կենդանիներ են:
2.Տատիկի ագարակում կան կովեր, ոչխարներ և հավեր:
3.Իմ եղբայրը ամեն օր կերակրում է իր ճագարներին:
4.Ագարակում ժամանակը անցնում է հետաքրքիր և արագ:
5.Իմ զարմուհին և ես սիրում ենք խնամել կենդանիներին:

1. Der Hund und die Katze sind Haustiere.
2. Die Großmutter hat auf dem Bauernhof Kühe, Schafe und Hühner.
3. Mein Bruder füttert jeden Tag seine Kaninchen.
4. Auf dem Bauernhof vergeht die Zeit interessant und schnell.
5. Meine Kusine und ich pflegen gern die Tiere.

.....
Ես սիրում եմ բոլոր կենդանիներին, բայց իմ սիրելի կենդանին արջն է:
2.Առյուծի վանդակը մեծ է:
3.Շաբաթ օրը կրկես է գալիս:
4.Արջամուկը ապրում է լեռներում:
5.Կիրակի օրը 5-րդ դասարանի աշակերտները այցելում են կենդանաբանական այգի:

1. Ich mag alle Tiere, aber mein Lieblingstier ist der Bär.
2. Der Käfig des Löwen ist groß.
3. Am Samstag kommt der Zirkus.
4. Das Murmeltier lebt in den Bergen.
5. Am Sonntag besuchen die Schüler der 5. Klasse den Zoo.

Lektion: Gesundheit
1. Արամի փորը ցավում է: Նա չի կարող ուտել:
2. Աննայի ձեռքը ցավում է: Նա չի կարող կիթառ նվագել:
3. Սաթին ջերմություն ունի: Նա չի կարող խաղալ:
4. Յանի ոտքը ցավում է: Նա չի կարող վազել:
5. Սոնայի ատամը ցավում է: Նա չի կարող տեքստը կարդալ:

1. Arams hat Bauchschmerzen. Er kann nicht essen.
2. Annas Hand tut weh. Sie kann nicht Gitarre spielen.
3. Sati hat Fieber. Sie kann nicht spielen.
4. Jans Fuß tut weh. Er kann nicht laufen.
5. Sona hat Zahnschmerzen. Sie kann nicht den Text lesen.

……
Findet das richtige deutsche Wort.
Հիվանդանոց - die Medizin, der Arzt, *das Krankenhaus*, der Krankenschein
Դեղատուն - die Arznei, der Arzt, *die Apotheke*, das Rezept
Մեջք - der Hals, *der Rücken*, die Schulter, die Hand
Բանջարեղեն - das Obst, die Gurken, *das Gemüse*, die Möhre
Ափսե - die Tasse, die Flasche, *der Teller*, das Glas
……
1. Արամը քաղցած է: Տուր նրան երշիկով հաց:
2. Ես ծարավ եմ: Ես կուզենայի մի բաժակ ջուր խմել:
3. Արամը սիրում է ուտել միս բանջարեղենով:
4. Կտրիր հացը և լվա պոմիդորը:
5. Ինչո՞ւ չես ուտում: - Ես կուշտ եմ:
6. Իմ ծնողները առավոտյան խմում են մեկ գավաթ սուրճ:

1. Aram ist hungrig. Gib ihm Wurstbrot.
2. Ich bin durstig. Ich möchte ein Glas Wasser trinken.
3. Aram isst gern Fleisch mit Gemüse.
4. Schneide das Brot und wasch die Tomate.
5. Warum isst du nicht? – Ich bin satt.
6. Meine Eltern trinken morgens eine Tasse Kaffee.

Այլ վարժություններ (լուծումներ)

Lektion: Gesundheit

Bringt die Sätze in die richtige Reihenfolge.

-Hallo Sona, hier ist Davit.
-Hallo Davit, wir wollen im Park Fahrrad fahren.
Hast du Lust? Kommst du mit?
-Nein, ich kann nicht.
-Warum kannst du denn nicht?
-Mein Rücken tut weh.

Ունկնդրման տեքստեր

Lektion: Wohnen

7.Hört die Texte. Wo sind die Kinder gern?

in der Bibliothek im Schwimmbad in der Schule

1.Im Sommer ist es oft heiß. Dann gehe ich ins Schwimmbad und springe gleich ins Wasser. Dort habe ich immer viel Spaß.

2.Ich gehe oft in die Bibliothek. Dort treffe ich meine Freunde. Manchmal leihe ich Bücher und Spiele aus.

3.Ich gehe jetzt in die 5. Klasse. Ich lerne Deutsch zweimal in der Woche. In der Klasse sind wir 20.

Lektion: Gesundheit

Hört die Dialoge. Was tut weh?

Hörtext 1 _____der Bauch____

Hörtext 2 _____der Zahn_____

Hörtext 3 _____der Hals_____

1) Au, au, au.

Was ist denn los.

Ich kann nicht essen.

Warum denn nicht?

Ich habe Bauchschmerzen.

2) Hallo Aram, kommst du heute mit ins Kino?

Hallo Ani, leider kann ich nicht kommen?

Was ist denn los?

Ich bin krank, mein Zahn tut weh.

3) Hallo Sona, hier ist Sati, ich kann heute mitspielen.

Hallo Sati, warum denn nicht? Bist du krank?

Ja, ich habe Fieber, mein Hals tut weh.

Արտադասարանային ընթերցանություն

Hänsel und Gretel

Es war einmal ein armer Holzfäller. Er lebte mit seinen zwei Kindern Hänsel und Gretel und seiner Frau in einem alten Haus am Waldrand. Sie waren sehr arm, sodass sie oft nichts zu essen hatten. Sehr oft ging die ganze Familie in den Wald um Pilze zu sammeln.

Da der Wald sehr tief und dunkel war, war es sehr schwer den Weg wieder herauszufinden. Da der Hunger so groß war, wollte die Stiefmutter die zwei Kinder im Wald aussetzen. Der Vater wollte dies eigentlich nicht, jedoch hatte auch er großen Hunger.

Als es Mitternacht war, weckte die Stiefmutter die Kinder, gab ihnen ein kleines Stück Brot und ging mit ihnen in den Wald. Sie hoffte, dass die beiden den Weg zurück aus dem Wald nicht finden würden.

Doch Hänsel und Gretel legten weiße Steine auf den Weg, somit mussten sie nur den Steinen folgen, um den Weg wieder nach Hause zu finden. Als Hänsel und Gretel wieder zu Hause ankamen und die Stiefmutter die Tür öffnete, war sie nicht begeistert, die zwei Kinder zu sehen. Der Vater freute sich sehr und umarmte seine Kinder ganz fest.

Eines Tages war die Hungersnot wieder so groß, dass die Eltern die Kinder wieder tief in den Wald führten. Auch diesmal durften sie nur ein kleines Brotstück mitnehmen. Hänsel und Gretel streuten statt den Steinen, Brotstücke auf den Weg. Leider pickten die Vögel alle Brotstücke auf und die Kinder verirrten sich.

Plötzlich sahen Hänsel und Gretel ein Haus aus Lebkuchen. Sie hatten schon Hunger und begannen das Haus anzuknabbern. Eine Stimme rief aus dem Häuschen: „Knusper, knusper, knäuschen! Wer knuspert an meinem Häuschen?“ Freundlich locke eine Hexe die beiden Kinder ins Haus.

Auf einmal packte die Hexe den Hänsel und zog ihn in einen Käfig. Gretel musste für ihren Bruder feines Essen kochen, damit er dick wurde. Die Hexe wollte Hänsel nämlich auffressen. Als die Hexe den Ofen öffnete, um die Wärme zu prüfen, schubste Gretel die Hexe mit voller Kraft in die Flammen und schloss die Ofentür.

Dann rannte sie zu ihrem Bruder und befreite ihn. Die Kinder holten Gold und Edelsteine aus der Schatztruhe der Hexe und machten sich damit auf den Weg nach Hause.

Als die daheim ankamen, war der Vater sehr froh und nahm sie überglücklich in die Arme. Und wenn sie nicht gestorben sind, dann leben sie noch heute.

(ein Märchen nach Brüder Grimm)

Übungen zum Textverstehen.

Kreuzen Sie die richtige Antwort an.

1. Wie heißen die Kinder?

a) Gretel und Hanna

b) Hänsel und Gustav

c) Hänsel und Gretel

2. Wer wollte die Kinder in den Wald schicken?

a) der Vater

b) die Mutter

c) die Stiefmutter

3. Wen trafen die Kinder im Wald?

a) ein wildes Tier

b) eine alte Hexe

c) ihren Vater

4. Wie konnte Gretel ihren Bruder befreien?

a) Sie schubste die alte Hexe in den Ofen.

b) Sie fesselte die alte Hexe an einen Stuhl.

c) Sie befreite ihn in der Nacht, während die Hexe

d) schlief.

Lesen und ausmalen - Hänsel und Gretel

Մատիտանկար- տնակ անտառում, երեք պատուհաններով և պատուհանափեղկերով, կոմինդրե տանիքով, դեպի դուռը տանող խճաքարե արահետով; Նկարը կից ֆայլի մեջ է:

Die Haustür ist schwarz.

Male das Dach rot und den Schornstein gelb an.

Den Steinweg musst du grün ausmalen.

Male die Hauswand blau und die Fensterläden rot an.

Oben am Himmel fliegen zwei schwarze Vögel.

Links neben dem Haus steht ein Junge mit blonden

Haaren. Rechts neben der Tür steht eine schwarze

Bank. Die Sonne scheint und man kann einen

Regenbogen am Himmel sehen.

Օգտագործված գրականության ցանկ

1. Bimmel, Peter u.a.(2017): Deutschunterricht planen. Fernstudieneinheit, Goethe Institut, Klett
2. Storch, Günther (1999): Deutsch als Fremdsprache. Eine Didaktik, Fink
3. Funk, Hermann u.a. (2014): DLL 4. Aufgaben, Übungen und Interaktion, Klett
4. Legutke, Michael u.a.(2012): DLL 1. Lehrkompetenz und Unterrichtsgestaltung, Klett
5. Ende, Karin u.a, (2013): DLL 06: Curriculare Vorgaben und Unterrichtsplanung, Klett-Langenscheidt.
6. Westhoff, Gerhard (2008): Fertigkeit Lesen, Fernstudieneinheit, Goethe Institut, Langenscheidt.
7. Reinhold, Maria (2009): Fertigkeit Hören und Lesen im Sprachunterricht - in Kombination mit Spielen.

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Լ. ՍԱՖԱՐՅԱՆ

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

5–ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մեթոդական ուղեցույց

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Կազմի ձևավորումը՝ Մարիամ Կանայանի

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16
Թուղթը՝ օֆսեթ: Ծավալը՝ 3,5 տպ. մամուլ

«Զանգակ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak